ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՈՒՄ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՄԻՐԲ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՈՐՈՆՔ ԵՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՆԵՎԻ ԴԻՄՈՒՄՈՒՄ

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երևան 2019

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՓԵՏՐՎԱՐ 2019թ.

Այս ուղեցույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով (ԱՄՆ ՄԶԳ): Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու են միմիայն հեղինակները և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....4
Ինչ է կենսաթոշակը.....5
Ո՞վքեր են հայաստանի հանրապետությունում օգտվում սոցիալական ապահովության իրավունքից.....5
Ո՞ր դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն օտարերկրացին և քաղաքացիություն չունեցող անձինք 5
Որո՞նք են տարիքային կենսաթոշակ ստանալու պայմանները.....5
Ե՞րբ պետք է դիմել տարիքային կենսաթոշակ ստանալու համար 6
Ո՞ր պահից է ծագում կենսաթոշակ ստանալու իրավունքը 7
Ինչպե՞ս պետք է վարվել, եթե անձն ունի մի քանի կենսաթոշակ ստանալու իրավունք..... 7
Ո՞ւմ պետք է դիմել կենսաթոշակ ստանալու համար.....7
Ինչ է անհրաժեշտ ներկայացնել կենսաթոշակ ստանալու համար 8
Ինչպե՞ս պետք է ստանալ կենսաթոշակը 8
Ինչ պետք է նշվի դիմումում 8
Կենսաթոշակն ինքնուրույն ստանալու անհնարինության դեպքում ի՞նչ կարող է անել կենսաթոշակառուն.....8
Տարիքային կենսաթոշակի առնչությամբ իրավունքների պաշտպանության համար ո՞ր հաստատություններին կարելի է դիմել..... 9
ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 11
Ո՞վ կարող է դիմել պաշտպանին.....11
Ո՞ր դեպքերում է կարելի դիմել պաշտպանին 11
Ինչ ժամկետներում կարելի է դիմել պաշտպանին 12
Ինչպե՞ս դիմել պաշտպանին 12
Ինչ պետք է ներառի պաշտպանին հասցեագրված դիմումը.....13

Նախաբան

Սույն ուղեցույցը մշակվել է «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և իրականացվում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության[1] կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ: Ուղեցույցը նպատակ ունի բարձրացնել մարդու իրավունքների իրազեկության մակարդակը հասարակությունում:

[1] Սույն ուղեցույցը արտահայտում է հեղինակների կարծիքը և հաստատված չէ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ներկայացուցիչների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և չի ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի՞նչ է կենսաթոշակը

«Պետական կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տարիքային կենսաթոշակը պետական կենսաթոշակի տեսակ է, որն անձի՝ պետությանը տրամադրած իր եկամտի վերադարձն է՝ անձի սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Ո՞վքեր են Հայաստանի Հանրապետությունում օգտվում սոցիալական ապահովության իրավունքից

Տարիքային կենսաթոշակի իրավունք ունեն՝

- ՀՀ քաղաքացիները.
- օտարերկրյա քաղաքացիները.
- քաղաքացիություն չունեցող անձինք:

Ո՞ր դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն օտարերկրացին և քաղաքացիություն չունեցող անձինք

Օտարերկրյա քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը կենսաթոշակ կարող են ստանալ միայն ՀՀ-ում բնակվելու իրավունք ունենալու և բնակվելու ժամանակահատվածում: Եթե օտարերկրյա քաղաքացին կամ երկքաղաքացիություն ունեցող անձն այլ պետությունում ստանում է կենսաթոշակ, ապա ՀՀ-ում վերջինիս կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է:

Որո՞նք են տարիքային կենսաթոշակ ստանալու պայմանները

Տարիքով պայմանավորված աշխատանքային կենսաթոշակ ստանալու պայմաններն են՝

- տարիքը (63 տարեկանը լրացած անձինք)
- աշխատանքային ստաժը
  (10 օրացուցային տարվա ստաժ):

Ե՞րբ պետք է դիմել տարիքային կենսաթոշակ ստանալու համար

Տարիքայի կենսաթոշակ ստանալու համար անձը Պետական սոցիալական ապահովության ծառայություն պետք է դիմի իր 63 տարեկանը լրանալուց հետո երեք շաբաթվա ընթացքում:

Կարևոր է իմանալ

Երեքշաբաթյա ժամկետում դիմելու դեպքում կենսաթոշակը հաշվարկվում է 63 տարեկանը լրանալու պահից, իսկ երեքշաբաթյա ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում հաշվարկը սկսվում է դիմումը ներկայացնելու օրվանից:

Ո՞ր պահից է ծագում կենսաթոշակ ստանալու իրավունքը

Անձի կենսաթոշակ ունենալու իրավունքը ծագում է, երբ նա դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնին, իսկ այդ մարմինը նշանակել է կենսաթոշակ:

Ինչպե՞ս պետք է վարվել, եթե անձն ունի մի քանի կենսաթոշակ ստանալու իրավունք

Տարբեր կենսաթոշակներ ստանալու իրավունք ունեցող անձը պետք է ընտրի և ստանա դրանցից միայն մեկը:

Ո՞ւմ պետք է դիմել կենսաթոշակ ստանալու համար

Կենսաթոշակ ստանալու համար անձը պետք է դիմի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին:
Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձն իրեն կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու և կենսաթոշակը վճարելու համար գրավոր դիմում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարին:

Կենսաթոշակ ստանալու համար անձը պետք է ներկայացնի՝

- գրավոր դիմում.
- անձը հաստատող փաստաթուղթ.
- աշխատանքային գրքույկ.
- այլ փաստաթղթեր (օրինակ՝ զինվորական գրքույկ, դիպլոմի պատճեն, տեղեկանք ուսման վայրից, երեխայի ծննդյան վկայական և այլն):

Ինչպե՞ս պետք է ստանալ կենսաթոշակը

Կենսաթոշակները վճարվում են կենսաթոշակառուի դիմումում նշված եղանակով՝ բանկի կամ վճարման ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով (օրինակ՝ փոստի միջոցով):
Կենսաթոշակառուն իրավունք ունի ցանկացած ժամանակ դիմել իր հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում՝ կենսաթոշակը ստանալու եղանակը կամ բանկը, կամ վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությունը փոխելու համար:

Ի՞նչ պետք է նշվի դիմումում

Անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստանալու համար դիմումում նշվում է բանկի անվանումը և բանկային հաշվի համարը, իսկ կենսաթոշակը կանխիկ եղանակով ստանալու համար դիմելու դեպքում՝ վճարման ծառայություն մատուցող կազմակերպության անվանումը:

Կենսաթոշակն ինքնուրույն ստանալու անհնարինության դեպքում ի՞նչ կարող է անել կենսաթոշակառուն

Կենսաթոշակն ինքնուրույն ստանալու անհնարինության դեպքում այն կարող է ստանալ տվյալ անձի բարեկամներից որևէ մեկը՝ նոտարի կողմից հաստատված լիազորագրի հիման վրա:

Կարևոր է իմանալ

Բանկային քարտի գործողության ժամկետը պետք է թարմացվի յուրաքանչյուր տարի: Նոտարի կողմից հաստատված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին:

Տարիքային կենսաթոշակի առնչությամբ իրավունքների պաշտպանության համար ո՞ր հաստատություններին կարելի է դիմել

- **ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությանը**՝ կենսաթոշակ նշանակելու և հաշվարկելու հարցերով.
- **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությանը**՝ պետական կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարացնելու, կենսաթոշակ վճարելը դադարացնելու և վերսկսելու նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու, ոլորտի գերատեսչական նորմատիվ ակտեր և պաշտոնական պարզաբանումներ մշակելու և այլ հարցերով.
- **ՀՀ արդարադատության նախարարության**

քրեակատարողական ծառայությանը՝ կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական պաշտպանության հարցերով.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավունքների խախտման, իրավունքների պարզաբանման, օրենսդրական խնդիրների և իրավական ակտերի սահմանադրականության հարցերով.

ՀՀ դատական մարմիններին՝ վարչական մարմինների ակտերը, գործողությունները վիճարկելու, իրավունքների պաշտպանությանհարցերով.

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին՝ օրենքով սահմանված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն ստանալու հարցերով.

հասարակական կազմակերպություններին՝ տեղեկատվական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն ստանալու հարցերով:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ իրավունք ունի դիմելու Պաշտպանին

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ 18 տարին չլրացած անձինք:

Ո՞վ կարող է դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարող են դիմել՝

- անձն անձամբ.
- ծնողը, զավակը կամ այլ մերձավոր ազգականը.
- ներկայացուցիչը, այդ թվում՝ փաստաբանը.
- հասարակական կազմակերպությունը՝ անձի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Կարևոր է իմանալ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմելն ԱՆՎՃԱՐ է:

Ո՞ր դեպքերում է կարելի դիմել Պաշտպանին

Պաշտպանին կարելի է դիմել այն դեպքերում, երբ խախտվել են մարդու իրավունքներն ու ազատությունները՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից.
- պետության կողմից պատվիրակված լիազորություն ունեցող կազմակերպության ու դրա պաշտոնատար անձի կողմից.
- հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների ու դրա պաշտոնատար անձանց կողմից:

Ինչ ժամկետներում կարելի է դիմել Պաշտպանին

Բողոքը կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների խախտման մասին:

Ինչպե՞ս դիմել Պաշտպանին

Գրավոր՝

- դիմումը Պաշտպանի աշխատակազմ անձամբ կամ փոստով հանձնելով (հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա).
- Պաշտպանին կամ նրա աշխատակազմի իրավասու ներկայացուցչին դիմումն առձեռն հանձնելով.
- էլեկտրոնային փոստով **(ombuds@ombuds.am):**

Բանավոր՝

Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցչին անձամբ հայտնելով.
աշխատակազմ զանգահարելով
(հեռ՝ +374 10 53 76 51).
անվճար 116 թեժ գծին զանգահարելով:

Ինչ պետք է ներառի Պաշտպանին հասցեագրված դիմումը

Պաշտպանին հասցեագրված դիմումը պետք է ներառի՝

- դիմողի անունը, ազգանունը, հասցեն.
- նրա ներկայացուցչի անունը, ազգանունը, հասցեն.
- հետադարձ կապի տվյալները
- (հեռախոսահամարը, էլ. հասցեն և այլն).
- խնդրի նկարագրությունը.
- դիմող անձի ստորագրությունը:

Կարևոր է իմանալ

- Պաշտպանին **դիմելը չի կասեցնում** դատարան դիմելու համար սահմանված ժամկետները:
- Միաժամանակ այլ մարմիններին բացառությամբ դատարանների,դիմելը չի խոչընդոտում Պաշտպանին հասցեագրված դիմումի քննությանը:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 56ա
Հեռ.՝ +374 10 539271 (քաղաքային)
+374 96 116100 (բջջային)
116 (թեժ գիծ)
Էլ. հասցե՝ ombuds@ombuds.am

WWW.OMBUDS.AM

ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

Շիրակի մարզ, ք. Գյումրի
Միհեր Մկրտչյան 44/46
+374 312 41981

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ
Կենտրոնական հրապարակ 4
+374 264 30116

Սյունիքի մարզ, ք. Կապան
Մելիք Ստեփանյան 6
+374 285 20116

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ք. Երևան, Նալբանդյան 13
Թեժ գիծ՝ 114 (անվճար)
Հեռ.՝ 0800-0114 (մարզերից)
+374 10 010114 (արտերկրից)
Հասցե՝ Երևան, 0010, Զաքյան 2
Էլ. փոստ՝ 39065702@e-citizen.am

Կայք՝ www.ssss.am